գր. №301

«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԻՎ 3,4 ՏՈՒՐԲՈԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/21-02/14

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳՀԲ) 02/14 (ՕՅՊ)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«08» հունիս 2021թ.

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Պատվիրատու»**, մի կողմից, և

«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Գ.Թորոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Կատարող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար թիվ 3,4 տուրբոագրեգատների ընթացիկ վերանորոգման աշխատանքների** կատարման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ ԱԱԾ կողմից ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008 որոշմամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն համարվում է կարևորագույն օբյեկտ, և ընկերության հարակից տարածք մուտք գործելը իրականացվում է հսկիչ-անցագրային կետով: Կատարողը պայմանագիրը ստանալուն պես աշխատանքները սկսելուց 50 օր առաջ, մուտքի անցագրեր ստանալու նպատակով, Պատվիրատուին պետք է ներկայացնի այն աշխատակիցների տվյալները ովքեր ընդգրկված են այդ աշխատանքներում:

2.4.5 Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող **10 աշխատանքային** օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **35 204 900** (երեսունհինգ միլիոն երկու հարյուր չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ **5 867 483.33** (հինգ միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր ութսուներեք ամբողջ երեսուներեք)

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Գնորդի կողմից ստորագրվելուց հետո մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում (այդ թվում ապրանքների վաղաժամկետ մատակարարման դեպքում):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե

աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «ՀԱԷԿ» ՓԲԸ	ԿԱՏԱՐՈՂ «Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ
Հասցե: ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 0910	**Հասցե:** 0064 ք.Երևան Բաբաջանյան 15 բն 53
ՀՎՀՀ: 04401874	**ՀՎՀՀ:** 01821313
Հ/Հ: 1930000199200100	**Հ/Հ:** 15700 02283510100
Բանկ: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	**Բանկ: Ամերիաբանկ**
Հեռ. (+374 10) 28-18-80, 20-04-91, 28 29 60	**Հեռ.:** +37491217179
E-mail: anpp@anpp.am	**E-mail: ergtender@bk.ru**
..... **Է. Մարտիրոսյան** /ստորագրություն/	..... **Գ.Թորոսյան** /ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«08» հունիսի 2021 թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/21-02/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միա-վորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	45221910	Թիվ 3 տուրբոագրեգատի ընթացիկ վերանորոգման աշխատանքները պետք է կատարել համաձայն կից ծավալաթերթի՝ հաստատված 21.12.2020թ.-ին ԳՃ-ի կողմից: Թիվ 4 տուրբոագրեգատի ընթացիկ վերանորոգման աշխատանքները պետք է կատարել համաձայն կից ծավալաթերթի՝ հաստատված 26.02.2021թ.-ին ԳՃ-ի կողմից:	դրամ	**35204900**	**35204900**	1	Ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում

Ծանոթություն.

1.Կատարողը պարտավոր է աշխատանքը սկսելուց 50 օր առաջ, Պատվիրատուի ղեկավարությանը ներկայացնել համապատասխան փաստաթղթեր՝ թույլտվություն (մուտքի անցագիր) ստանալու համար:

2.Պատվիրատուի կողմից մուտքի թույլտվությունը տրամադրվում է լիազոր մարմնի (ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ) կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության №744 առ. 09.06.2005թ. որոշման:

3.Վճարումը կկատարի փաստացի կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4. Աշխատանքը կատարման ավարտին պետք է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ–ում գործող (Акт о ремонте оборудования выполненного сторонними организациями, Бланк исполнительных документов ТОиР по Акту о ремонте (УД. АТД.09.ОПР.001 ут. 10.02.15г. пр. №534 от 23.08.13г.)) փաստաթղթերը:

5.**Երաշխիքային ժամկետ՝ 12 ամիս**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀԱԷԿ» ՓԲԸ

Է. Մարտիրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ

..... **Գ.Թորոսյան**

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1.1
«08» հունիսի 2021 թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/21-02/14 ծածկագրով պայմանագրի

Հաստատում եմ
ՀԱԷԿ գլխավոր ճարտարագետ
_____ Ա.Ռ. Գրիգորյան
_____2020թ.

Ծավալաթերթ

«ՀԱԷԿ» ՓԲԸ 3-րդ տուրբոգեներատորի տուրբինի ընթացիկ նորոգում

№ հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
1	Բաշխիչ մեխանիզմի հիմնանորոգում մաշված դետալների փոխարինումով:	լրակազմ	1	
2	РК-1;2 -ի հիմնանորոգում արդիականացումով՝ АО «Турбоатом»-ի խորհրդի համաձայն, նամակ № 02/05-214 от 02.06.2020թ.:	հատ	2	
3	СК-1;2 - քանդում հետագա հավաքումով՝ շոգու մաղի ապամոնտաժման համար:	հատ	2	
4	РК-3;4-ի սյունակաթսաների, լծակների և առանցքակալային հանգույցների ստուգում:	լրակազմ	2	
5	Թմբուկի ստուգում՝ մաշված դետալների փոխարինումով:	հատ	1	
6	Ճոճանի (балансир) ստուգում՝ ձողի (рейка) փոխարինումով անհրաժեշտության դեպքում:	լրակազմ	1	
7	ГСМ-ի հատիչի մղակի (золотник) և առանցքատուփի (букса) ստուգում, փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում:	լրակազմ	1	
8	ГСМ-ի մղակի և հակադարձ կապի լծակների ստուգում՝ մաշված դետալների փոխարինումով:	լրակազմ	1	
9	СК-1÷4 և СЗ-1;2 ի հովացման սարքերի ստուգում:	հատ	6	
10	ЦНД-1;2-ի 5 աստիճանների աշխատանքային թիակների, կալանդների (бандаж) կապերի և սևեռակապնդիչների (стопор) ստուգում:	լրակազմ	4	
11	ЦНД-1;2-ի արտանետման հովացման համակարգի ստուգում արատավոր մորկիչների փոխարինումով:	լրակազմ	4	
12	ЦНД-1;2-ի մտոցների (люк) քանդում և հավաքում:	հատ	8	
13	МО 1÷4 ընթացիկ վերանորոգում, կափարիչների և մտոցների քանդում և հավաքում, շրջանառու ջրի խողովակային համակարգի մաքրման համար:	հատ	4	
14	1;2 օդածծիչների (эксгаустер) ընթացիկ նորոգում:	հատ	2	
15	КОС 1÷7-ի շոգեառումների (отбор пара) և СПП-II աստիճանի վրա КОС-երի ընթացիկ նորոգում: КОС-երի խցուկային (сальник) խտացումների ստուգում:	հատ	8	
16	КОС զտիչների զննում և մաքրում:	հատ	2	
17	КИС 1;2 -ի ընթացիկ նորոգում:	հատ	2	
18	СЗ-1;2-ի սերվոշարժիչների տաշտերից և տուրբինի առանցքակալների հենարաններից յուղի դրենաժային համակարգի վերականգնում	լրակազմ	1	
19	МНС-3А;3Б յուղային պոմպերի հիմնանորոգում:	հատ	2	

№ h/h	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
20	ՊՄՀ գործարկման յուղային պոմպի հիմնանորոգում:	հատ	1	
21	ՎԲՀ-ի ՄՕ հիմնական նորոգում:	հատ	1	ՊՀԷ ծրագրով ՎԲՀ-ի արդիականացման դեպքում՝ նշված աշխատանքները չկատարել:
22	ՐՄՀՍ-3 պահեստային յուղային պոմպի ընթացիկ նորոգում:	հատ	1	
23	ԱՄՀՍ-3 վթարային յուղային պոմպի հիմնանորոգում:	հատ	1	
24	ՎԲՀ-ի յուղային արտարկիչի (эжектор) ընթացիկ նորոգում:	հատ	1	
25	ԳՅ-500 հիդրոփականի ընթացիկ նորոգում:	հատ	1	
26	Տատանամարիչով (демпфер) յուղային բաքի ԴՄԲ ընթացիկ նորոգում:	հատ	1	
	Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պահեստամասերը և նյութերը տրամադրվում են «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից:			

Գլխ. ճարտարագետի տեղակալ
վերանորոգումների գծով — Մ.Ս. Կարապետյան

ՎՆԿԲ պետ — Օ.Գ. Գևորկյան

ՏԱ պետ — Ա.Ս. Զեյնալյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... **Է. Մարտիրոսյան**
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ

..... **Գ.Թորոսյան**
/ստորագրություն/

Կ.Տ.

Հաստատում եմ
ՀԱԷԿ գլխավոր ճարտարագետ

_____ Ա.Ռ. Գրիգորյան
_____ 2021թ.

Ծավալաթերթ

«ՀԱԷԿ» ՓԲԸ 4-րդ տուրբոգեներատորի տուրբինի ընթացիկ նորոգում

№ հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
1	Բաշխիչ մեխանիզմի հիմնանորոգում մաշված դետալների փոխարինումով:	լրակազմ	1	
2	Թմբուկի ստուգում՝ մաշված դետալների փոխարինումով:	հատ	1	
3	Ճոճանի (балансир) ստուգում՝ ձողի (рейка) փոխարինումով անհրաժեշտության դեպքում:	լրակազմ	1	
4	РК-1;2 հիմնական նորոգում ժամանակավոր շոգեմաղերի փոխարինումով գործարանայինով:	հատ	2	
5	РК-3;4-ի ոյունակաթսաների, լծակների և առանցքակալային հանգույցների ստուգում:	լրակազմ	2	
6	Առջևի աթոռի կափարիչի բացում ГСМ-ի առանցքատուփի և հատիչի մղակի ստուգման համար:	լրակազմ	1	
7	ГСМ-ի հատիչի մղակի (золотник) և առանցքատուփի (букса) ստուգում, փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում:	լրակազմ	1	
8	ГСМ-ի մղակի և հակադարձ կապի լծակների ստուգում՝ մաշված դետալների փոխարինումով:	լրակազմ	1	
9	СК-1÷4 և СЗ-1;2 ի վերուվարման սարքերի ստուգում:	հատ	6	
10	ЦНД-1;2-ի 5 աստիճանների աշխատանքային թիակների, կալանդների (бандаж) կապերի և սեռակապնդիչների (стопор) ստուգում:	լրակազմ	4	
11	ЦНД-1;2-ի արտանետման հովացման համակարգի ստուգում արատավոր մրրկիչների փոխարինումով:	լրակազմ	4	
12	ЦНД-1;2-ի մտոցների (люк) քանդում և հավաքում:	հատ	8	
13	МО 1÷4 ընթացիկ վերանորոգում, կափարիչների և մտոցների քանդում և հավաքում՝ շրջանառու ջրի խողովակային համակարգի մաքրման համար:	հատ	4	
14	1;2 օդածծիչների (эксгаустер) ընթացիկ նորոգում:	հատ	2	
15	КОС 1÷7-ի շոգեառումների (отбор пара) և СПП-II-րդ աստիճանի վրա КОС-երի ընթացիկ նորոգում: КОС-երի խցուկային (сальник) խտացումների ստուգում:	հատ	8	
16	КОС զտիչների զննում և մաքրում:	հատ	2	
17	КИС 1;2 -ի ընթացիկ նորոգում:	հատ	2	
18	СЗ-1;2-ի սերվոշարժիչների տաշտերից և տուրբինի առանցքակալների հենարաններից յուղի դրենաժային համակարգի վերականգնում:	լրակազմ	1	
19	МНС-4Б յուղային պոմպի հիմնանորոգում:	հատ	1	

№ h/h	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
20	МНС-4А յուղային պոմպի ընթացիկ նորոգում:	հատ	1	
21	ՊՄՀ գործարկման յուղային պոմպի հիմնանորոգում:	հատ	1	
	Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պահեստամասերը և նյութերը տրամադրվում են «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից:			

Գլխ. ճարտարագետի տեղակալ
վերանորոգումների գծով — Մ.Ս. Կարապետյան

ՎՆԿԲ պետ — Օ.Գ. Գևորկյան

ՏԱ պետ — Ա.Ս. Զեյնալյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Է. Մարտիրոսյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ

Գ.Թորոսյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
« 08 » հունիսի 2021 թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/21-02/14 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221910	Թիվ 3;4 տուրբոագրեգատի ընթացիկ վերանորոգում	35 204 900	35 204 900	35 204 900	35 204 900	35 204 900	35 204 900	35 204 900	35 204 900

Ծանոթություն.

- Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «ՀԱԷԿ» ՓԲԸ -ի հրապարակված փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... **Է. Մարտիրոսյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ

..... **Գ.Թորոսյան**
/ստորագրություն/
Կ.Տ.